Բաց նամակ
Հայաստանի գիտական համայնքի
ներկայացուցիչներից

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին և Կառավարության անդամներին
ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանին և պատգամավորներին

Վերջին տարիներին գիտության պետական ֆինանսավորման աճը, իրականացվող քաղաքականությունը, Կառավարության 2026–2031 թվականների ծրագրի և Գիտության ոլորտի զարգացման 2026–2030 թվականների ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ Ռազմավարություն) ընդունումն անախադեպ քայլեր են Հայաստանում մրցունակ գիտական համակարգ ձևավորելու ուղղությամբ: Ռազմավարությունը սահմանում է հստակ և հավակնոտ թիրախներ՝ մինչև 2030 թվականը հետազոտությունների և մշակումների պետական ֆինանսավորումը պետք է հասնի ՀՆԱ-ի 0,75%-ին, իսկ հանրային հատվածում աշխատաժամանակի լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող հետազոտողների թիվը՝ 3012-ից 6000-ի, ընդորում՝ արդեն 2027 թվականին՝ 4000-ի:

Այս քաղաքականության առաջին արդյունքներն արդեն տեսանելի են՝ գիտական հրապարակումներում, նորենթակառուցվածքներում և հետազոտողների նոր սերնդի ձևավորման մեջ: Գիտության մեջ ներդրումների լիարժեք արդյունքը տնտեսության զարգացման և պետության կարիքների բավարարման հարցում երևում է տարիներ անց, և մենք դեռ այդ ճանապարհի սկզբում ենք. առաջին խոշոր բազմամյա դրամաշնորհային ծրագրերն ավարտվում են միայն այս տարի, իսկ մյուսներն ընթացքի մեջ են: Արդեն կատարված ներդրումների արժեքը մեծապես կախված է նրանից, թե որքան շարունակական կլինեն գիտության զարգացմանն ուղղված քաղաքականությունն ու ֆինանսավորումն առաջիկա տարիներին:

Մինչդեռ 2027 թվականի պետական բյուջեի նախագծում, որին Կառավարությունը հավանություն տվեց հոկտեմբերի 1-ին, գիտության ֆինանսավորումը չի համապատասխանում Ռազմավարության թիրախներին հասնելու համար անհրաժեշտ ներդրումների ծավալին: «Գիտատեխնոլոգիական գործունեություն» ծրագրի ընդհանուր ֆինանսավորումն աճում է մոտ 5%-ով, իսկ երկու առանցքային ուղղության՝ գիտական դրամաշնորհային և նպատակային ծրագրերի ֆինանսավորումը մնում է անփոփոխ՝ 2026 թվականի մակարդակում: Քանի որ 2026 թվականին ծրագրի ֆինանսավորումը նվազել էր, նույնիսկ այս աճից հետո այն 2027 թվականին չի հասնում 2025 թվականի մակարդակին (33,9 մլրդ դրամ): Այսինքն՝ երեք տարվա կտրվածքով աճ չկա: Այս պայմաններում անհասկանալի է, թե ինչպես կարելի է

արդեն 2027 թվականին հետազոտողների թիվը հասցնել 4000-ի, ձևավորել նոր հետազոտական խմբեր և հայտարարել նոր դրամաշնորհային մրցույթներ:

Առաջիկա տարիներին հետազոտությունների և մշակումների պետական ֆինանսավորումը պետք է զգալիորեն և հետևողականորեն աճի, որպեսզի մինչև 2030 թվականը հասնի ՀՆԱ-ի 0,75%-ին և հիմք ստեղծի ոլորտի շարունակական զարգացման համար: Եթե 2027 թվականին աճը սահմանափակվի շուրջ 5%-ով՝ անհրաժեշտ առնվազն 35%-ի փոխարեն, ապահետագա տարիներին պահանջվող աճը պետք է շատ ավելի կտրուկ լինի՝ տարեկան մոտ 50%: Մեր մտահոգությունը խորացնում է նաև 2026 թվականի փոքր. բյուջեի լրացուցիչ հավելվածով գիտահետազոտական ծրագրերի և գիտական սարքավորումների համար նախատեսված առնվազն 7 մլրդ դրամը մինչ օրս չի հատկացվել:

Մի շարք մրցույթների գնահատումն արդեն ավարտվել է կամ ավարտման փուլում է: Դրանց թվում են «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր – 2026», «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում – 2026», «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր – 2026», «PostDoc-Armenia – 2026» և «Նպատակային ծրագրեր – 2027» մրցույթները, որոնց ընդհանուր հաշվով ներկայացվել է ավելի քան 450 նախագիծ: Այս ծրագրերի մեծ մասի մեկնարկը նախատեսված էր 2026 թվականին, սակայն դրանց ֆինանսավորման և իրականացման ժամկետների վերաբերյալ դեռևս հստակ տեղեկություններ չկան:

Առանձնապես խոցելի են արտերկրից գիտական ներուժի ներգրավմանն ուղղված երեք ծրագիրը: Ծրագրերին դիմել են արտերկրում աշխատող ավելի քան 100 հետազոտող՝ Հայաստանի գիտական համակարգին հեռավար միանալու կամ իրենց գիտական գործունեությունն այստեղ շարունակելու համար: Մրցույթներին մասնակցելու համար սահմանված էին գիտական արդյունավետության և համապատասխան որակավորման բարձր չափանիշներ, հետևաբար խոսքը մրցունակ հետազոտողների ներգրավման իրական հնարավորության մասին է: Այս ծրագրերի մեկնարկի ժամկետներն արդեն անցել են, բայց մինչ օրս հայտնի չէ, թե երբ և ինչ ֆինանսավորմամբ դրանք կիրականացվեն:

Դրամաշնորհային և նպատակային ծրագրերի ֆինանսավորման անփոփոխ մնալը հատկապես խնդրահարույց է: Այդ միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են. 2025 թվականին դրանց կատարողականը գերազանցել է 95%-ը, ինչը համարվում է շատ լավ ցուցանիշ, և նույն պատկերն են ցույց տալիս 2026 թվականի առայժմ հասանելի տվյալները: Գնաճի պայմաններում անփոփոխ ֆինանսավորումն իրականում նշանակում է հատկացումների կրճատում: Բացի այդ, այս միջոցների զգալի մասը նախատեսված է ընթացիկ բազմամյա ծրագրերի համար: Նոր մրցույթներ հնարավոր

կլինի ֆինանսավորել միայն ավարտվող ծրագրերից ազատվող գումարներով: Նման պայմաններում լավագույն դեպքում կպահպանվի հետազոտական խմբերի ներկայիս թիվը: Մինչդեռ Ռազմավարությունը նախատեսում է այդ թիվն ավելացնել և ներգրավել ավելի շատ երիտասարդ ու Հայաստան վերադարձող գիտնականներ:

Այս որոշումներն ուղղակիորեն ազդելու են նաև Ակադեմիական քաղաքի վրա, որը կրթության և գիտության ոլորտում Կառավարության առանցքային նախագծերից մեկն է և որի շինարարությունը նախատեսվում է սկսել 2027 թվականին: Ակադեմիական քաղաքի իրական արժեքը կախված կլինի ոչ միայն նոր ենթակառուցվածքներից, այլև այնտեղ աշխատող գիտնականների և դասախոսների ներուժից: Այդ ներուժը ձևավորվում է հենց հիմա՝ նոր հետազոտական խմբերի, երիտասարդ գիտնականների և արտերկրից ներգրավված մրցունակ հետազոտողների շնորհիվ: Եթե գիտության զարգացումն այսօր դանդաղի, Ակադեմիական քաղաքը կարող է ունենալ նոր ենթակառուցվածքներ, բայց չունենալ բավարար թվով որակյալ հետազոտողներ և դասախոսներ՝ դրանք լիարժեք օգտագործելու համար: Բուհերի համար նույնպես դժվար կլինի ապահովել արդիական, գիտահետազոտական հենք ունեցող կրթություն:

Այս համատեքստում լրացուցիչ մտահոգություն է առաջացնում ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանի սեպտեմբերի 29-ի հրաժարականը: Նա իր որոշումը պատճառաբանեց նրանով, որ «առկա միջավայրում» և իրեն հասանելի գործիքներով այլևս չի կարող ապահովել բարեփոխումների համար անհրաժեշտ «տեմպը, հետևողականությունն ու պատասխանատվության մակարդակը»: Անկախ հրաժարականի պատճառներից՝ 2027 թվականի բյուջետային որոշումների և ոլորտի ղեկավարության փոփոխության համընկնումը պահանջում է հստակ և բաց հաղորդակցություն գիտական համայնքի հետ: Մեր մտահոգությունը վերաբերում է ոչ թե որևէ անձի, այլ գիտության պետական քաղաքականության շարունակականությանը, կանխատեսելիությանը և ռազմավարական նպատակների իրականացմանը:

Հայաստանի գիտական համակարգը դեռևս զգայուն է քաղաքականության կտրուկ փոփոխությունների և ֆինանսավորման անկանխատեսելիության նկատմամբ: Չհիմնավորված կամ անկանխատեսելի փոփոխությունները կարող են ոչ միայն թուլացնել արդեն ձևավորված խմբերը և խթանել մասնագետների արտահոսքը, այլև **նվազեցնել Հայաստանի գրավչությունն երիտասարդ և վերադարձող գիտնականների համար, խաթարել միջազգային գործընկերների վստահությունը և վնասել երկրի գիտական հեղինակությանը**: Խաթարված վստահությունն

ու վնասված հեղինակությունը վերականգնելու համար կարող է պահանջվել 2 տարվա երկար ժամանակ և ավելի մեծ ռեսուրս, քան այսօրվա ձեռքբերումները պահպանելու և Ռազմավարությանը համահունչ զարգացումն ապահովելու համար:

Ուստի կոչ ենք անում Ձեզ 2027 թվականի պետական բյուջեում անհրաժեշտ չափով ավելացնել գիտական դրամաշնորհային և նպատակային ծրագրերի ֆինանսավորումը: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի մեկնարկել արդեն գնահատված նախագծերը և շարունակել ընթացիկ բազմամյա ծրագրերը՝ առանց գիտնականների թիվը կրճատելու:

Ակնկալում ենք նաև, որ Կառավարությունը և գիտության քաղաքականության ու ֆինանսավորման համար պատասխանատու մարմինները գիտական համայնքի հետ բաց և բովանդակալից երկխոսություն կծավալեն: Կարևոր է հստակ պատասխան ստանալ այն հարցին, թե արդյոք Կառավարության ծրագրով և Ռազմավարությամբ սահմանված նպատակներն ու դրանց հասնելու ճանապարհը մնում են անփոփոխ: Եթե փոփոխություններ են նախատեսվում, դրանք պետք է նախապես և հրապարակայնորեն ներկայացվեն՝ պատճառների բացատրությամբ և հնարավոր հետևանքների գնահատմամբ:

Գիտության քաղաքականությունը կարող է վերանայվել, բայց յուրաքանչյուր փոփոխություն պետք է հիմնավորվի և քննարկվի գիտական համայնքի հետ: Մեզանից շատերն իրենց կյանքի ու աշխատանքի կարևոր որոշումները կայացրել են՝ վստահելով այդ քաղաքականությանը: Այսօրվա որոշումներից է կախված նաև, թե արդյոք երիտասարդ գիտնականներն ու արտերկրում աշխատող հայ և օտարերկրյա հետազոտողները կկապեն իրենց ապագան Հայաստանի հետ:

Մենք ցանկանում ենք մեր գիտելիքը, ժամանակը և ջանքերը շարունակել ներդնել Հայաստանում՝ մրցունակ գիտություն, գիտելիքահեն տնտեսություն և տեխնոլոգիապես ուժեղ երկիր կառուցելու համար, սակայն պետությունն ևս պետք է նույնքան հետևողական լինի իր հանձնառություններում: Մրցունակ գիտությունը կառուցվում է միայն վստահության, շարունակականության և կանխատեսելիության վրա:

Ստորագրողներ (միանալու համար ստորագրել հետևյալ [հղումով](#))

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհում դերը
1	Արսեն Առաքելյան	21AG-1F021; 25FAST-1F004	Ղեկավար
2	Բաբայան Նելլի	23LCG-1F002; 25EDP-1F024	Ղեկավար
3	ԱննաՄկրտչյան	24LCG-1D018	Ղեկավար

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
4	Կարեն Նազարյան	21AG-1F057	Ղեկավար
5	Սիրաս Հակոբյան	21AG-1F021; 26PTS-1F025	Հետազոտական թիմի անդամ
6	Մարգարյան Քրիստինե	21T-1F076", 22SC-BMBF-1B005, 24FP-4B027, 24LCG-1E006	Ղեկավար
7	Քրիստինա Ավանեսյան	24LCG-1E006	Հետազոտական թիմի անդամ
8	Ani Hovakimyan	24FP-3A057 ; 25RG-1F134 ; 24-2PTS-1F021 ; 1-18/21T-01	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
9	Բելլա Գրիգորյան	24FP-4B027;22SC-BMBF-1B005;24LCG-1E006	Հետազոտական թիմի անդամ
10	Ավագյան Հրանուշ	21APP-1F007	Հետազոտական թիմի անդամ
11	Andranik Davinyan	23RL1D001	Հետազոտական թիմի անդամ
12	Ani Stepanyan	24RL-1F029	Համաղեկավար
13	Լիլիթ Ներսիսյան	24LCG-1F030; 24FP-2I061	Ղեկավար
14	Զավեն Կարալյան	21APP-1F007 ; 21SC-RBSCST-1F004; № 25DD-1F049	Ղեկավար
15	Մարիա Նիկողոսյան	25FAST-1F005;25RL-1F024	Համաղեկավար
16	Աիդա Ավետիսյան	25DD-1F049	Հետազոտական թիմի անդամ
17	Ք. Հարությունյան	24FP-3A057	Հետազոտական թիմի անդամ
18	Արմենուհի Մնացականյան	21AG-1D040	Հետազոտական թիմի անդամ
19	Սոնա Հակոբյան	21SC-RBSCST-1F004	Հետազոտական թիմի անդամ
20	Մելինա Թամազյան	25RL-1F024	Հետազոտական թիմի անդամ
21	Մովսես Աղեկյան	25AA-1F065;21AG-1F057	Հետազոտական թիմի անդամ
22	Մելինե Հակոբյան	21SC-BRFFR-1F020;21AG-1F021;25EDP-1F024	Հետազոտական թիմի անդամ
23	Տիգրան Հարությունյան	21AG-1F068; 22SC-BMBF-1C001	Ղեկավար
24	Ռազմիկ Սարգսյան	24FP-2I061, 24LCG-1F030	Հետազոտական թիմի անդամ
25	Ռոբերտ Հակոբյան	22RL-017	Համաղեկավար
26	Սուրեն Դավիթավյան	25FAST-1F004; 24RL-1F029	Հետազոտական թիմի անդամ
27	Գայանե Ղազարյան	25RG-1F134	Ղեկավար

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
28	Նելլի Վարդազարյան	24FP-2I061; 24LCG-1F030	Ճահճառուծ (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
29	Հասմիկ Ջանգինյան	25RG-1F134	Հետազոտական թիմիանդամ
30	Աննա Միսակյան	23LCG-1F002	Հետազոտական թիմիանդամ
31	Անի Թևոսյան	25AA-1B039; 23LCG-1F002	Ճահճառուծ (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
32	Ռոզի Մկրտչյան	24LCG-1F030	Հետազոտական թիմիանդամ
33	Marine Arakelyan	21AG-1F033; 25DD-1F073	Ղեկավար
34	Զարուհի Խաչատրյան	21AG-1F025	Հետազոտական թիմիանդամ
35	Gayane Manukyan	21AG-1F072	Ղեկավար
36	Ռուզաննա Պետրոսյան	Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր – 2026	Ղեկավար
37	Լիլիթ Ապեսյան	23LCG-1F002	Հետազոտական թիմիանդամ
38	Սուսաննա Ղոնյան	21AG-1F072; 24AA-1F007	Հետազոտական թիմիանդամ
39	Արսեն Սարգսյան	21AG-1F057;22AA-1F025	Հետազոտական թիմիանդամ
40	Պայծառ Մանթաշյան	23RL-1B004	Համաղեկավար
41	Արման Ավետիսյան	24LCG-1C005	Հետազոտական թիմիանդամ
42	Լիլիթ Դալլաքյան	24FP-4B027; 24LCG-1E006; 25AA-1F049 ; 26PTS-1E009	Ճահճառուծ (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
43	Աննա Մելքոնյան	23RL-1C005;25AA-1C020;26PTS-1C010;24-2PTS-1C010	Ճահճառուծ (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
44	Գրիգոր Մանթաշյան	23RL-1B004; 26PTS-1C011; 24AA-1C014; 24-2PTS-2F007	Ճահճառուծ (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
45	Դավիթ Հայրապետյան	24LCG-1C005; 24FP-2A029	Ղեկավար
46	Լևոն Եպիսկոպոսյան	21AG-1F025	Ղեկավար
47	Նարեկ Պապիկյան	24LCG-1C005	Հետազոտական թիմիանդամ

	Անուն Ազանուն	2021–2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
48	Սարգիս Գավալաջյան	24AA-1C015 ; 24-2PTS-1C011 ; 23RL-1C005	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
49	Գյուլնարա Խաչատրյան	23RL-1B004; 25AA-1C030; 25PTS-1C004	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
50	Eduard Hakobyan	23RL-1B004 ; 24-2PTS-1C008	Հետազոտական թիմի անդամ
51	Էռնեստ Վարդանյան	24LCG-1C005; 25PTS-1C0003; 25AA-1C023	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
52	Արտավազդ Կոստանյան	24LCG-1C005	Հետազոտական թիմի անդամ
53	Gor Kharatyan	23RL-1B004, 23AA-1C017	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
54	Հերմինե Ղարագուլյան	Գիտական ստորաբաժանումներ ի դրամաշնորհի 2021, ամրապնդում՝ 2024	Ղեկավար
55	Գրիգորյան Նարինե	25RG-1F134	Հետազոտական թիմի անդամ
56	Աստղիկ Հովհաննիսյան	23RL-1D001	Համաղեկավար
57	Խաչատուր Մելիքսեթյան	26TARGET-1E015	Ղեկավար
58	Սարգիս Աղայան	23RL-1F014; 25DD-4A048	Ղեկավար
59	Էդմոնդ Գրիգորյան	23RL-1E042	Համաղեկավար
60	Սամվել Պիպոյան	21AG-1F033	Հետազոտական թիմի անդամ
61	Անուշ Մարտիրոսյան	21AG-1F072	Հետազոտական թիմի անդամ
62	Վահրամ Սերոբյան	22RL-016	Համաղեկավար
63	Արփինե Հարությունյան	20TTWS-1D049; 20TTWS-1D049; 23LCG-1D019; 24WS-1D029	Ղեկավար
64	Zahra Amini Sabegh	25PostDoc/2-1C003	Ղեկավար
65	Անահիտ Սեդրակյան	25RG-1F173	Ղեկավար
66	Լիլիթ Սահակյան	25DD-4C063	Ղեկավար
67	Օլգա Բելյաևա	24LCG-E012	Ղեկավար
68	Դավիթ Պիպոյան	24LCG-4A011	Ղեկավար
69	Արմեն Գալստյան	21SCG-1D005; 21T-1D320; 24LCG-1D009	Ղեկավար

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
70	Վահան Քոչարյան	21AG-1C069	Համաղեկավար
71	Naira Ayvazyan	22AG-1F031	Ղեկավար
72	Գրիգոր Առաքելով	19YR-1F072; 21AG-1F057; 23-2PHD-1F007	Ղեկավար
73	Մագդալինա Զախարյան	25RG-1-F173	Հետազոտական թիմի անդամ
74	Գևորգ Տեփանոսյան	24LCG-1E008; 24FP-4C006: 25SC-CNR-4C010; 25DD-1E014	Ղեկավար
75	Սպարտակ Հովհաննիսյան	24LCG-1E012	Հետազոտական թիմի անդամ
76	Ջոն Կարապետյան	21SCG-1E021	Ղեկավար
77	Աստղիկ Ղազարյան	21TWS-1F031; 21SCG-1F015; 24FP-4B036; 25DD-1F073; 26NARD-1B008;	Ղեկավար
78	Anna Tovmasyan	21AG-1D013	Հետազոտական թիմի անդամ
79	Հայկ Զաքարյան	23LCG-2F012	Ղեկավար
80	Հրանտ Խաչատրյան	21AG-1C069	Հետազոտական թիմի անդամ
81	Սոնյա Խոսրովյան	23RL-1C037	Հետազոտական թիմի անդամ
82	ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍՄԱՐՅԱՆ	21T-1E252; 23LCG-1E016; 25DD-1E039	Ղեկավար
83	Լանա Կարապետյան	21SCG-1F010, 25Y5-1F023	Հետազոտական թիմի անդամ
84	Արփինե Մինասյան	24AA-1F030; 26PTS-1F050; 21AG-1F021; 25FAST-1F004	Հետազոտական թիմի անդամ
85	Էմմա Խաչատրյան	23-AA-1D021; 24-LCG-1D018; 25PTS-1D009	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
86	Varduhi Hayrapetyan	21SCG-1F010	Հետազոտական թիմի անդամ
87	Հասմիկ Նիկողոսյան	22-RL-017	Հետազոտական թիմի անդամ
88	Narineh Kianian	24RL-1F029	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
89	Աննա Գրիգորյան	21SCG-1D009; 24LCG-1D018	Հետազոտական թիմի անդամ
90	Աստղիկ Շահխաթունի	24WS-1D029	Ղեկավար
91	Գոհար Մարտիրոսյան	25RG-1D076; 25YR-1D007	Հետազոտական թիմի անդամ
92	Սաթենիկ Հովսեփյան	25RG-1D076, 25YR-1D007	Հետազոտական թիմի անդամ
93	Անի Պետրոսյան	25RG-1D076; 25YR-1D007	Հետազոտական թիմի անդամ

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհում դերը
94	Սաթենիկ Պետրոսյան	25SC-CNR-1D007	Հետազոտական թիմի անդամ
95	Ժաննա Հովակիմյան	25RG-1F016, 25DD-1F044	Ղեկավար
96	Ղազարյան Կարապետ	24LCG-1D018	Հետազոտական թիմի անդամ
97	Հովհաննես Ադոնց	22RL-017; 24DP-1D007	Հետազոտական թիմի անդամ
98	Ռաֆիկ Արամյան	21AG- 1A045	Հետազոտական թիմի անդամ
99	Էլինա Առաքելովա	25RG-4A110	Հետազոտական թիմի անդամ
100	Ալվարդ Անտոնյան	25RG-1F085	Ղեկավար
101	Ռոքսանա Զախարյան	25EDP-1F033; 25FAST-1F004; 21SCG-1F010; 23EDP- 1F009	Ղեկավար
102	Կարինե Առաքելովա	25RG-1-F173	Հետազոտական թիմի անդամ
103	Ալվարդ Հովհաննիսյան	25RG-1-F173	Հետազոտական թիմի անդամ
104	Ծողիկ Հակոբյան	25RG-1-F173	Հետազոտական թիմի անդամ
105	Սիրանուշ Սարդարյան	24LCG-1D018	Հետազոտական թիմի անդամ
106	Նելլի Մուրադյան	21AG-1F057, 22AA- 1F026	Ղեկավար
107	Արսեն Գալստյան	23RL-1C037	Հետազոտական թիմի անդամ
108	Նարեկ Չիլինգարյան	25PTS-1F007; 25AA-1F064	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
109	Ani Avetisyan	25AA-1F080; 25IRF/2-1F004	Ղեկավար
110	Աննա Եսայան	21AG-1C069	Հետազոտական թիմի անդամ
111	Անգին Գրիգորյան	25RG-1F059	Ղեկավար
112	Արտյոմ Պետրոսյան	21LCG-1D009	Հետազոտական թիմի անդամ
113	Նվարդ Վարդանյան	21AG-1F072	Հետազոտական թիմի անդամ
114	Հայկ Բեգլարյան	24LCG-1D017	Ղեկավար
115	Վարդան Մարգարյան	23RL-1C037	Համաղեկավար
116	Տիգրան Սարգսյան	23RL-1C005	Համաղեկավար
117	Արփինե Անդրեասյան	22RL-061	Համաղեկավար
118	Լիանա Գաբրիելյան	21T-1F179; 24W-1F025; 25RG-1D053	Ղեկավար

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
119	Լուսինե Ալոյան	25EDP-2I015	Ղեկավար
120	Սաթենիկ Մկրտչյան	23AA-1F020	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
121	Հայկ Պետրոսյան	22YR-1D023; 25YR-1D022; 25PTS-1D013; 26SIEq-YSU-CHEM-0012	Ղեկավար
122	Gayane Nazaryan	21AG	Հետազոտական թիմի անդամ
123	Տարիել Ղոչիկյան	ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ԳՀ կենտրոնի ղեկավար	Ղեկավար
124	Շահինյան Գոհար	21T- 1D165; 21APP-2E008	Հետազոտական թիմի անդամ
125	Զարուհի Կարաբեկյան	25-FAST-1F002	Համաղեկավար
126	Անահիտ Եղիազարյան	24LCG-1F030	Հետազոտական թիմի անդամ
127	Վարդանուշ Ստեփանյան	24LCG-1D017	Հետազոտական թիմի անդամ
128	Anna Isahakyan	24LCG-1D017	Հետազոտական թիմի անդամ
129	Անահիտ Գոգյան	24-2PTS-1C003	Ղեկավար
130	Գևորգ Մարտիրոսյան	21AG-1F021	Հետազոտական թիմի անդամ
131	Հասմիկ Շիլաջյան	26SIEq-YSU-CHEM-0091, 21T-1D245	Ղեկավար
132	Աննա Գևորգյան	24LCG-1D009	Հետազոտական թիմի անդամ
133	Արփինե Աչոյան	25RG-1F147	Ղեկավար
134	Ara Tonoyan	24-2PTS-1C004; 23-2PTS-1C004	Ղեկավար
135	Նանե Բայրամյան	21 SC -RBS ST-1F004	Հետազոտական թիմի անդամ
136	Տիգրան Եգանյան	21SCG-1D005, 22AA-1D005, 24LCG-1D005, 25PTS-1D023	Հետազոտական թիմի անդամ
137	Արփինե Պողոսյան	25DD-1F049	Հետազոտական թիմի անդամ
138	Լուսինե Սահակյան	25EDP-2I015; 25SC-CNR-1D007	Հետազոտական թիմի անդամ
139	Նուշիկ Զարիկյան	24WS-1F017	Ղեկավար
140	Davit Hambardzumyan	25RL-1C026; 25AA-1C079	Համաղեկավար
141	Ադրինե Սահակյան	21AG-1D034; 24LCG-2F027	Հետազոտական թիմի անդամ
142	Անդրանիկ Չավուշյան	21AG-1F021	Հետազոտական թիմի անդամ
143	Եվա Բարեղամյան	24AA-1F031	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհում դերը
144	Վահրամ Հայրապետյան	25RG-1F017	Ղեկավար
145	Հասմիկ Սարգսյան	18T-1D012; 21T-1D026	Հետազոտական թիմի անդամ
146	Արուս Շահվերդյան	23RL-1C037	Հետազոտական թիմի անդամ
147	Վահրամ (Վոլոդյա) Մխիթարյան	23RL-1C005	Հետազոտական թիմի անդամ
148	Հարություն Գյուլասարյան	25FAST-1C003	Հետազոտական թիմի անդամ
149	Վահան Գրիգորյան	23AA-1F037	Ղեկավար
150	Armen Sargsyan	25RG-1C008	Ղեկավար
151	Արամ Սահարյան	21AG-1C047;24FP-3B021	Ղեկավար
152	Liana Hayriyan	25YR1D007; 25RG-1D076	Ղեկավար
153	Հովհաննես Ասատրյան	22YR-5B031; 24SSAH-5B030	Հետազոտական թիմի անդամ
154	Մելինե Բեգլարյան	21T-4A259; 20TTCG-4A001; 24LCG-4A011; 24FP-4C006;և պատակայ ին	Հետազոտական թիմի անդամ
155	Անի Ավետիսյան	25RG-1F215	Ղեկավար
156	Զեմֆիրա Հովհաննիսյան	24LCG-1D017	Հետազոտական թիմի անդամ
157	Արեն Կիրակոսյան	24LCG-1D017	Հետազոտական թիմի անդամ
158	Սեյրան Մինասյան	60-ից ավելի գրագրեր, ներկայումս 47 ծրագիր	Ղեկավար
159	Կարեն Քեռյան	23RL-1A027	Ղեկավար
160	ՍոնաՆիկոլյան	23AA-1F036	Ղեկավար
161	Anna Poladyan	21AG-1F043	Ղեկավար
162	Հռիփսիմե Կոբելյան	25RL-1F016	Հետազոտական թիմի անդամ
163	Հայկ Սարգսյան	21AG-1C022	Ղեկավար
164	Կարեն Ղազարյան	21AG-4C075; 24FP-4C013	Ղեկավար
165	Անի Պալոյան	21SCG-2I017; 24FP-2J041; 24LCG-2I019; 25EDP-2I006	Ղեկավար
166	Գոռ Գևորգյան	23LCG-1F005	Ղեկավար
167	garnik Asatrian	21AG-6A079	Ղեկավար
168	Ասատրյան Վարդան	22RL-023	Ղեկավար
169	Սահակ Գասպարյան	25RG-1D061	Ղեկավար
170	Սևակ Սարգսյան	25DD-1B021; 25DP-1B005	Ղեկավար
171	Դավիթ Սարգսյան	25RG-1C008	Հետազոտական թիմի անդամ
172	Արևիկ Ասատրյան	22rl-012	Համաղեկավար
173	Մարի Աթաբեկյան	25RG-1D064	Ղեկավար

	Անուն Ազանուն	2021–2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհումդերը
174	Անահիտ Սաքեյան	23LCG-1D019	Հետազոտական թիմի անդամ
175	Viktorya Rstakyan	21RL-050, 25EDP-2F002	Ղեկավար
176	Դավիթ Մայիլյան	24DP-2E005; 1-22/TB-22; 1-22/TB-23; 1-22/TB-24; 21AG-2F059	Ղեկավար
177	Հովհաննես Մովսիսյան	24AA-1B021; 25EDP-1B030	Ղեկավար
178	Անահիտ Ալեքսանյան	21AG-2F059, 20DP-1D03, 1-22/TB, 1-23/TB,1-24/TB/TB	Հետազոտական թիմի անդամ
179	Նարեկ Կարապետյան	24DP-2E005	Հետազոտական թիմի անդամ
180	Թամարա Սիրունյան	25FAST-1F004	Հետազոտական թիմի անդամ
181	Գայանե Չիլինգարյան	21T-2F024; 22rl- 045; 25RL-2F029	Հետազոտական թիմի անդամ
182	Մարիետա Զաքարյան	24WS-2F013; 23-2DP-1C010; 1-22/23LCG-2F001; 21T-1D227	Ղեկավար
183	Հերմինե Եփրեմյան	22RL-023; 24WS-1F046	Հետազոտական թիմի անդամ
184	Մարինաժեժու	24PostDoc-2F002 (2024-2026)	Ղեկավար
185	Լիանա Մխիթարյան	22rl-050; 26PTS-1D044; 24AA-1D012	Ղեկավար
186	Սոֆի Պետրոսյան	25DP-1D006; 24WS-1D029; 26PTS-1D021	Հետազոտական թիմի անդամ
187	Մարտին Գրիգորյան	21AG-1A066	Ղեկավար
188	Մկրտիչ Երանոսյան	25DP-2J018; 24LCG-2J031; 21DP-2J017; 21APP-2J013	Ղեկավար
189	Vardan Sahakyan	23AA-1B007	Ղեկավար
190	Ավետիս Ծատուրյան	25RG-3C118	Ղեկավար
191	Սոնա Գրիգորյան	22RL-012	Հետազոտական թիմի անդամ
192	Vladimir Golovchenko	21AG-1F072	Հետազոտական թիմի անդամ
193	Սոֆիյա Այդինյան	23LCG-2F001; 24FP-3B026	Ղեկավար
194	Narek Sisakyan	20RF-166; 20DP-1C06; 22rl-045; 26PTS-2F024	Համաղեկավար
195	Լուսինե Բաղդասարյան	21AG-1F068	Հետազոտական թիմի անդամ
196	Լիա Գրյազնովա	25AA-1F037, 24RL-1F029	Ղեկավար
197	Լիլիթ Բաղդասարյան	22RL-050; 25EDP-2F002; 24PTS-1D012 24FP-2F023	Հետազոտական թիմի անդամ
198	Նանե Պետրոսյան	23AA-2F033	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
199	Ռուզաննա Գրիգորյան	20TTCG-1F004	Հետազոտական թիմի անդամ

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհում դերը
200	Նատալյա Սարգսյան	20TTCG-1F003	Հետազոտական թիմի անդամ
201	Նելլի Գասպարյան	23RL-1C005	Հետազոտական թիմի անդամ
202	Նեյտ Զադիրակոն	25RL-1F024; 25FAST-1F005	Հետազոտական թիմի անդամ
203	Նաիրա Ազատյան	21AG-1C044	Հետազոտական թիմի անդամ
204	Գիսանե Լազարյան	25FAST-1F004; 21AG-1F021; 24AA-1F003; 25EDP-1F033	Ղեկավար
205	Հայկ Ասլանյան	25RG-1B142;25YR-1B025	Ղեկավար
206	Մալաջյան Արթուր	25AA-1B034	Շահառու (ասպիրանտական, մասնագիտական վերապատրաստում)
207	Կարեն Ավետիսյան	25EDP-1B030, 25DP-1B015	Ղեկավար
208	Հայկ Հովհաննիսյան	24LCG-2J031	Հետազոտական թիմի անդամ
209	Աստղիկ Ցոկոլակյան	22-YSIP-041;22AA-2J029;22RL-056	Համաղեկավար
210	Շալիկո Արշակյան	24LCG-2J031	Հետազոտական թիմի անդամ
211	Սերգեյ Աբրահամյան	21AG-1B052	Հետազոտական թիմի անդամ
212	Ջիվան Հակոբյան	24DP-1B001	Ղեկավար
213	Լիանա Պողոսյան	22RL-023; 24WS- 1F046; 25DD-1F037	Հետազոտական թիմի անդամ
214	Ալիսա Մանուկյան	21AA-1F034	Ղեկավար
215	Ժենյա Պողոսյան	25AA-1E055; 24LCG-1E008; 25SC-CNR-4C010; 25DD-1E014	Ղեկավար
216	Մարիամ Հարությունյան	24LCG-1D009	Հետազոտական թիմի անդամ
217	Արմեն Սարդարյան	24AA-1B023	Ղեկավար
218	Սիրանուշ Նանագյուլյան	21T-1F281; 25RG-1F160	Ղեկավար
219	Էրիկ Վահանյան	24LCG-2J031	Հետազոտական թիմի անդամ
220	Davit Davtyan	22rl007	Համաղեկավար
221	Լևոն Գրիգորյան	21AG-1C069	Ղեկավար
222	Ալինա Զուռնաչյան	23LCG-2F001	Հետազոտական թիմի անդամ
223	Victor Spangenberg	23IRF-1F06	Ղեկավար
224	Մերի Արշակյան	22RL-023	Հետազոտական թիմի անդամ

	Անուն Ազանուն	2021-2026թթ. ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհի ծածկագիր	ԿԳՄՍՆ ԲԿԳԿ դրամաշնորհում դերը
225	Գայանե Պետրոսյան	21AG-1C064	Հետազոտական թիմի անդամ
226	Ռուբեն Իսրայելյան	21AG-1D013	Հետազոտական թիմի անդամ
227	Աստղիկ Գևորգյան	21YSS-018 - 2021; 21T-1E242 - 2021;24LCG-1E008 - 2024; 24FP-4C006 - 2024; 25SC-CNR-4C010 - 2025; 25DD-1E014 - 2026	Հետազոտական թիմի անդամ
228	Michel Kulhandjian	«Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2026» մրցույթ	Ղեկավար
229	Hovik Panosyan	25SRNSF-1F020	Ղեկավար
230	Մերիռոուզ Մելքումյան	25RG-1F134	Այլ՝
231	Դերենիկ Պետրոսյան	22RL-056 ; 23DP-2J034; 25DP-2J018; 25PTS-2J010 ;26PTS-2J029	Այլ՝
233	Հերմինե Օհանյան	21AG-1C064	Հետազոտական թիմի անդամ
234	Նիկոլայ Ավթանդիլյան	23LCG-1F010	Ղեկավար
235	Ashkhen Zatikyan	21AG-1D015.	Հետազոտական թիմի անդամ
236	Գևորգ Գրիգորյան	21T-1D329; 25RG-1D053	Հետազոտական թիմի անդամ
237	Ղարիբյան Ինա	24LCG-1E008	Հետազոտական թիմի անդամ
238	Անի Սարիբեկյան	24LCG-1E008; 25SC-CNR-4C010; 25DD-1E014	Հետազոտական թիմի անդամ
239	Աստղիկ Կուզանյան	24WS-1C016; 25RG-1C065	Ղեկավար
240	Հայարփի Սիմոնյան	25SC-CNR-1D007; 25RG-1D121	Ղեկավար
241	Մերի Հայրապետյան	23RL-2A031	Հետազոտական թիմի անդամ
242	Andranik Davinyan	23R	Հետազոտական թիմի անդամ
243	Էլյա Սաֆարյան	23LCG-1D019	Հետազոտական թիմի անդամ
244	Կարինե Դավթյան	24FP-4C006; 24LCG-1E008; 25DD-4C063	Հետազոտական թիմի անդամ
245	Լիլիթ Գաբրիելյան	21T-1F179; 21SC-BRFFR-1F012; 24WS-1F025; 25RG-1F098	Ղեկավար
246	Էլեն Հակոբյան	23IRF-1E02	Հետազոտական թիմի անդամ
247	Աստղիկ Սուքոյան	25RG-1D108	Հետազոտական թիմի անդամ
248	Տաթևիկ Մովսիսյան	25RG-1D108	Հետազոտական թիմի անդամ